C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

No. 22

20.01.2024

Ոսկի և արծաթ՝ WorldSkills Armenia 2023-ից

Մեր ապագա դերձակները փայլեցին «Հայաստանի հմտություններ» մրցույթի ազգային փուլում. 3-րդ կուրսի ուսանողուհիներ Միրա Ներսիսյանն ու Լուիզա Զաքարյանը, ցուցադրելով իրենց մասնագիտական հմտությունները, ոսկե և արծաթե մեդալների արժանացան:

WorldSkills Armenia ազգային մրցույթի հաղթող Միրա Ներսիսյանը 2024 թվականին Լիոնում կմասնակցի «Համաշխարհային հմտություններ» 47-րդ միջազգային մրցույթին:

Հայ ուսանողը 5-րդ անգամ նմանօրինակ հնարավորություն կունենա և կմրցակցի 86 անդամ երկրների ներկայացուցիչների հետ: Միջազգային հեղինակավոր այդ հարթակում մեր երկիրը ներկայացնում է ՄԿՈՒՉԱԿ-ը:

Հաջողված և խոստումնալից նախագիծ. IMPROVET-AM

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում Կենտրոնի գործընկեր SEPR կամպուսի համակարգմամբ իրականացվող IMPROVET-AM խոստումնալից նախագիծն արդեն իրականություն է:

SEPR-ը, Apro Formazione-ն, ՍԵՊՖԱ-ն, Գյումրու պետական բժշկական քոլեջը, Hovakimyan-Lab-ը միավորում են իրենց ուժերը Ֆրանսիայում, Իտալիայում և Հայաստանում՝ ի նպաստ Մասնագիտական կրթության և ուսուցման կարողությունների զարգացման:

Կարողությունների զարգացման ծրագիրն իրականացվում է «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության մեջ թվային գործիքների, տարեցների խնամքի կենտրոններում սոցիալ-առողջապահական ներդրման և մասնագիտական կողմնորոշման ուղղություններով:

ԵԿՀ Գերազանցության կենտրոնների ցանցի ամփոփիչ հանդիպում Թուրինում

Կենտրոնի տնօրեն Գոհար Գրիգորյանը Իտալիայի Թուրին քաղաքում մասնակցեց Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված համաժողովին, որի նպատակն էր մասնակիցների հետ կիսել և քննարկել ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Մասնագիտական կրթության գերազանցության կենտրոնների միջազգային ծավալները» ծրագրի արդյունքները:

Ծրագիրն իրականացվում է ԵԿՀ-ի կողմից և հանդիսանում է գերազանցության կենտրոնների ցանցի նախաձեռնությունը: Նշենք, որ ՍԵՊՖԱ-ն հանդիսանում է ԵԿՀ գերազանցության կենտրոնների ցանցի միակ անդամը Երևանում:

Ամրապնդում ենք բարեկամությունը...

ՍԵՊՖԱ-ն այս անգամ իր հյուրընկալ դռները բացեց ACFOA կազմակերպության ներկայացուցիչների առջև: Հիշեցնենք, որ ACFOA-ի կողմից իրականացվող միջազգային համերաշխության ծրագրի շրջանակում 2023 թվականի օգոստոսին ՍԵՊՖԱ-ի ուսանողների մի խումբ մեկնել էր Մարսել՝ Septèmes-les-Vallons համայնք:

Արցախի 44-օրյա պատերազմի մասնակից մեր ուսանողները Մարսելում արժանացել էին ջերմ ընդունելության, կատարել մշակութային այցեր, մի շարք հանդիպումներ ունեցել, շփվել տեղի հայ համայնքի հետ: Երևանում կայացած հանդիպումների ընթացքում նախանշվեցին արդեն հիմք դրված համագործակցության հետագա քայլերը:

Մասնակցեցինք ՈԱԱԿ-ի կազմակերպած համաժողովին

«Տնտեսական աճը կարողությունների զարգացման միջոցով» թեմայով համաժողովին, որի կազմակերպիչը Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնն էր, մասնակցեց նաև ՍԵՊՖԱ-ն: Քննարկվեցին՝ ինչպես կարող է

կրթական համակարգը նպաստել տնտեսական աճին, ինչպես նաև աջակցել գործատուների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև երկխոսությանը և համագործակցության հնարավորությունների ստեղծմանը: Տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Ե.Մարտիրոսյանը մասնակցեց «Տնտեսական զարգացում՝ համահնչեցնել ՄԿՈՒ կրթական ծրագրերը արդյունաբերության կարիքներին» թեմայով պանելային քննարկմանը:

Նրանք են մեր ապագան...

«Ապագա քաղաքացին՝ ի դեմս այսօրվա ուսանողի» խորագրով միջոցառումը ՈւԽ-ի նախաձեռնությամբ, կազմակերպվել էր Ուսանողների միջազգային օրվա առթիվ: Միջոցառման ընթացքում քննարկվեցին ժամանակակից քաղաքացի կերտելու առանցքային կետերը՝ «Էկոմտածողություն», «Սոցցանցերից ճիշտ օգտվելու կանոններ», «Գրագիտության դերը հասարակության համար», «Ուսանողների իրավունքներն ու պարտականությունները», «Կյանքում դժվարությունների հաղթահարման ուղիները»: Որպես ամփոփում՝ ուսանողները խոստացան հետևողական լինել, որպեսզի ՍԵՊՖԱ-ում ներդրվի և իրականացվի նշված թեմաներից յուրաքանչյուրը:

Իրազեկման շրջայց

Արդու իրավունքների պաշտպանության օրվան ընդառաջ՝ իր աշխատանքները մեկնարկեց ՍԵՊՖԱ ՈՒԽ-ի կազմում հիմնադրված Իրավական հարցերի պատասխանատու հանձնախումբը: Հանձնախմբի անդամները կատարեցին իրազեկման շրջայց՝ ուսանողներին կառույցի գործունեության էությունը և առաջիկա ծրագրերի հիմնական ուղղությունները ներկայացնելու համար:

Պատրաստում ենք մրցունակ մասնագետներ

Կարիերայի կենտրոնի պատասխանատու Անուշ Ստեփանյանը շատ լավ գիտի, որ արդյունավետ թիմի կառավարումն ու զարգացումը գործա-

տուների առաջնային նպատակներից է: Ուստի 2023-2024 ուստարվա առաջին դասընթացը՝ «Արդյունավետ թիմի ստեղծում» թեմայով հենց այդ նպատակին էր միտված: Ա. Ստեփանյանը կարողացավ ՍԵՊՖԱ-ի ուսանող-մասնակիցների մոտ ձևավորել այն գիտակցումը, որ թիմում սեփական դերի ու պատասխանատվության զգացումը հաջողակ աշխատանքի գրավականն է:

վերլուծությունն օգնում է ուսանողներին վեր հանել իրենց ուժեղ և թույլ կողմերը: Դասընթացի ընթացքն ու ավարտն ինչ խոսք խոստումնալից են: Այն շարունակվում է՝ ներառելով տարբեր թեմաներ:

Հավաստի տեղեկատվություն մասնագետից

Դանրային առողջության մասնագետ, Արմավիրի մարզի համաճարակաբան Արման Աղեկյանը կենտրոնի ուսանողներին ներկայացրեց ամբողջ աշխարհում մտահոգություն առաջացրած մի թեմա՝ «Թմրանյութերի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա»:

Հանդիպման նպատակն էր ուսանողներին տրամադրել հավաստի տեղեկատվություն անմիջապես մասնագետից: Երիտասարդության շրջանում անհրաժեշտ է բարձրացնել օրգանիզմի վրա թմրանյութերի վնասակար ազդեցության մասին տեղեկացվածության մակարդակը: Ուսանողները մասնագետից ստացան նաև իրենց հուզող հարցերի պատասխանները:

Ղափաման՝ ազգային խոհանոցի գանձ

Հայկական ավանդական ղափաման հայերի, զբոսաշրջիկների շրջանում առավել ճանաչելի դարձնելու, ուտեստի պատրաստման գաղտնիքներին ծանոթացնելու նպատակով Երևանի Կենտրոն վարչական շրջանի և Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ անցկացվեց տոնական միջոցառում՝ Ղափամայի տոնը: Տոնին մասնակցեց նաև ՍԵՊՖԱ-ն:

Ղափամա համտեսելու եկած այցելուներին կենտրոնի ներկայացուցիչներն առաջարկեցին նաև հայկական ավանդական գաթա, դդումի մուսով տարտ, դդումով կարկանդակ, բանջարեղենային տոլմա, կեքս, ռոլլեր և ոչ միայն:

Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից կենտրոնն արժանացավ հավաստագրի:

«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» ՀԿ-ն «Մեգերյան Կարպետ» ընկերությունում կազմակերպել էր «Ղափամայի շուրջ» ամենամյա ամփոփիչ միջոցառումը, որին կենտրոնը ևս մասնակցեց և գուրմաններին առաջարկեց ոչ միայն ավանդական ղափամա, այլ նաև շատ յուրօրինակ ու համեղ ուտեստներ:

«Համեղ» հնարավորություն

«Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները դասախոս Ե. Մարությանի ղեկավարությամբ հյուրընկալվեցին Հայաստանում շոկոլադագործության ամենայուրօրինակ ընկերություններից մեկում՝ TadDin Chocolatier-ում:

Ընկերության հիմնադիր-շոկոլադագործները դասընթացի ընթացքում ՍԵՊՖԱ-ի ուսանողներին փոխանցեցին շոկոլադագործության ոլորտում կիրառվող տեխնոլոգիաները և կիսվեցին ոլորտում սեփական փորձի հմտություններով, ծանոթացրեցին կակաոյի ունդերից շոկոլադի ստացման բարդ ու հետաքրքիր գործընթացին:

Ուսանողներին սպասում էր նաև անակնկալ. նրանք իրենց ձեռքով պատրաստեցին շոկոլադե ձվիկներ, որոնց մեջ նվերներ կային :

Բացահայտելով արխիվը

ՍԵՊՖԱ-ի 3-րդ կուրսի ուսանողները պատմության դասախոս Օ. Դարբինյանի ուղեկցությամբ գիտաճանաչողական այց կատարեցին Հայաստանի ազգային արխիվ :

Ուսանողները տեղում ծանոթացան արխիվային ֆոնդերի համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման աշխատանքներին, ինչպես նաև հնարավորություն ունեցան ուսումնասիրել արխիվային բացառիկ փաստաթղթեր :

Մասնագիտական այց

«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության առաջին կուրսի ուսանողներն արտուսվարպետ Գոհար Փոլադյանի ուղեկցությամբ այցելեցին Բյութի Գարդեն խանութ սրահ:

Կենտրոնի ապագա վարսահարդարները շրջեցին, ծանոթացան աշխատանքի ընթացքում անհրաժեշտ բոլոր նյութերին ու գործիքներին, ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները :

Հանդիպեցինք «Մանկավարժական սրճարանում»

Հիմնվելով Ֆրանսիայի գործընկեր SEPR կամպուսի հաջողված փորձի վրա՝ ՍԵՊՖԱ-ում մեկնարկեց փորձի փոխանակման նոր հարթակ՝ «Մանկավարժական սրճարան»: Առաջին հանդիպման ժամանակ քննարկվեցին գիտելիքի ստուգման նոր գործիքի ներդրման, ETF վեբինարին ներկայացված դասավանդման նորարարական ռեսուրսների և գործիքների կիրառման մեթոդները :

«Երկրորդ կյանք՝ լքված իրերին»

Դերձակ Հ-3 կուրսի ուսանողուհիները հանդես եկան հիանալի ու տարբերվող նախաձեռնությամբ. «Երկրորդ կյանք՝ լքված իրերին» խորագիրը կրող ցուցադրությանը ներկայացրեցին այնպիսի աշխատանքներ, որոնց համար օգտագործել էին իրեր, որոնք վաղուց լքված էին կամ տան մի անկյունում թաքնված: Մարտահրավերն ընդունեցին Վարսահարդար Հ-3 կուրսի ուսանողները:

Շուտ երազանք պահեք, ՍԵՊՖԱ-ում այն իրականանում է

Երազանքներն իրականանում են, երբ ամբողջ սրտով հավատում ենք, հատկապես երբ երեխաներն են երազում:

Վահան Տերյանի անվան թիվ 60 և Ստեփան Լիսիցյանի անվան թիվ 34 հիմնական դպրոցի 18 արցախցի աշակերտներին կենտրոնում անակնկալ էր սպասում. փոքրիկ հյուրերի ներկայությամբ վառվեցին կենտրոնի տոնածառի լույսերը: Արցախցի փոքրիկները անմիջական մասնակիցը դարձան «Ձմեռ պապը մասնագիտությունների խաչմերուկում» խորագիրը կրող ամանորյա ուրախ, ինտերակտիվ միջոցառմանը: